

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Կոպիասի հայրական Հանրապետության հիմնադրումին առաջին տարեկարծին առթիւ, Երեւանի կառավարութիւնը մայիս 28-ին հանդիսաւորապէս հռչակած էր Ամբողջական Հայաստանի Միութիւնը և անկախութիւնը։ Ազգ. Պատուիրակութիւնը խորին ուրախութեամբ ընդունեց այդ ակտը, որ կը հաստատէ իր իսկ ըրած էշ 1918 նոյ. 30-ին Դաշնակից կառավարութեանց հաղորդած Յայտարարութիւնը, որով կը հռչակէր — անկախութիւնը սովորական Հայաստանի, որուն մէկ մասը կազմակերպուած է արդէն իր և անկախ Հանրապետութիւն մը։

Բայց նոյն առթիւ Հանրապետութեան արդի կառավարութիւնը նոյն ինքզինքը հռչակած ըլլալով միանգամայն թէ Անկախութեան Հայաստանի և թէ արեւմտեան Հայաստանի կառավարութիւն, ազգ. Պատուիրակութիւնս իսկոյն յայտարարեց Հանրապետութեան Բարիկի ներկայացուցիչներուն թէ, քաղաքական ու օրինական պատճառներով, ինչքը անհամաձայն է այդ ակտին այն պայմաններուն պատճառով, որոնց մէջ կատարուած է, — ինչ որ հեռագրով հաղորդուած է Երեւանի կառավարութեան։

Հետեալքար երկու Պատուիրակութեանց միջև կատարուած են բանակցութիւններ, որոնք արդէն մասամբ եղած են արդիւնաւոր և Ազգ. Պատուիրակութիւնը կը պատրաստուի արդէն Երեւան դրկել Առաքելութիւն մը, այն տեղ գոյացնելու համար վերջնական համաձայնութիւնը։

Զերմայս կը յանձնարարենք ուրեմն, հայ ժողովրդի բոլոր տարրերուն, այս փափուկ հարցին վերջնական լուծումը բողոք պաշտօնական պատասխանատու Մարմիններուն և հանդարտ կերպով սպասել ամուր յաջող ելքին։

Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան
Նախագահ

(Ստորգ.) Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Հայ Ազգային Պատուիրակութեան
Նախագահ

(Ստորգ.) ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Փարիզ.-6 Օգոստոս 1919